



Բացօթյա խաղահրապարակների Վերաբացման Արձանագրություն

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը, գիտական և հանրային առողջապահության փորձաքննության աջակցությամբ, որդեգրում է աստիճանական մոտեցում՝ թույլ տալու որոշ վայրերի ապահով վերաբացումը: Ներքոհիշյալ պահանջները մասնավորեցված են բացօթյա խաղահրապարակների համար, որոնց վերաբացումը թույլատրվել է Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանով: Նահանգապետի կողմից նշված այս հատուկ վայրերում պարտադրված պայմաններից բացի, այս վայրերի գործունեությունը պետք է նաև համապատասխանի հետևյալ ցուցակում անկա բոլոր պայմաններին:

Այս արձանագրությունը վերաբերվում է զբոսայգիներում, ճամբարային տարածքներում և այլ հանրային վայրերում գտնվող բացօթյա խաղահրապարակներին: Փակ խաղահրապարակներին ու ընտանեկան զվարճանքի կենտրոններին այս պահին չի թույլատրվում վերաբացվել:

Բացօթյա խաղահրապարակներ են համարվում այն խաղահրապարակները, որոնք ամբողջովին գտնվում են դրսում, հասանելի են հանրության համար, անվճար են մուտքի և օգտագործման համար, շահագործվում են քաղաքի, նահանգի, շրջանի կամ դաշնային կառավարության կողմից, հիմնականում նախատեսված են ծառայելու կես մղոն հեռավորության վրա ապրող բնակիչներին և սովորաբար ունեն հանգստի սարքավորումներ, օրինակ՝ խաղային կառույցներ, սլայդներ, ճոճանակներ և այլն, որոնք նախատեսված են երեխաների ֆիզիկական առողջությունն ու զարգացումը խթանելու համար: Բացօթյա խաղահրապարակները կարող են պետության կողմից պարտադրված տարածք տրամադրել նախադպրոցական հաստատությունների համար, սակայն դրանց օգտագործումը պետք է նախապես պլանավորվի՝ հանրության կամ այլ դպրոցների հետ միաժամանակյա օգտագործումից խուսափելու համար:

Քաղաքային և շրջանային գործակալություններն իրավունք ունեն փակել խաղահրապարակը, եթե հնարավոր չէ անվտանգ կերպով ապահովել վարակի վերահսկման կամ ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները:

Խնդրում ենք նկատի ունենալ. Լրացուցիչ տեղեկատվության և ռեսուրսների հասանելիության դեպքում այս փաստաթուղթը կարող է վերանայվել, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի վերանայումներին և հարակից ուղեցույցներին ծանոթանալու համար:

Ցուցակն ընդգրկում է.

- (1) Աշխատատեղի քաղաքականությունն ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու միջոցառումներ
- (3) Վարակի տարածման վերահսկման միջոցառումներ
- (4) Հաղորդակցությունն աշխատակիցների և հասարակության հետ
- (5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիությունն ապահովելու միջոցառումներ



Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն ձեր հաստատության կողմից վերաբացման ցանկացած արձանագրության մշակման ժամանակ:

Սույն ուղեցույցում ընդգրկված բոլոր բացօթյա խաղահրապարակները պետք է իրականացնեն ներքոհիշյալ բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ:

Հաստատության անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

A. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Խաղային կառույցների կամ տարածքներում, որտեղ կարող են գտնվել մեկից ավելի երեխաներ, կարելի է ժապավենով կամ այս տեսողական ցուցիչներով նշումներ անել՝ օգնելու համար երեխաներին գնահատել, թե արդյոք իրենք վեց ոտնաչափ հեռու են միմյանցից:
- Խնամակալներին/մեծահասակներին հիշեցվում է, որ իրենցից պահանջվում է տարբեր տներում բնակվող երեխաներին պահել առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա:
- Եթե կա նախապես պլանավորված գործողություն, որի համար անհրաժեշտ է մուտք գործել խաղահրապարակ, ապա խաղահրապարակն այդ ընթացքում պետք է փակ լինի լայն հասարակության համար:
- Երեխաների ինամքի ծրագրերը, դպրոցները, արտադպրոցական և երեխաների ու երիտասարդների համար նախատեսված այլ ծրագրերը, որոնց ժամանակ երեխաները պետք է մասն խմբերում, չեն կարող խաղահրապարակներն օգտագործել այն ժամերին, երբ դրանց բաց են հանրության համար: Այնուամենայնիվ, եթե խաղահրապարակի օպերատորը թույլ է տալիս, երեխաների ինամքի, դպրոցական կամ այլ ծրագրերը կարող են նախապես պատվիրել այնպիսի ժամ, երբ խաղահրապարակը բացառապես կօգտագործվի ծրագրի կողմից: Խաղահրապարակում գտնվելու ընթացքում խմբերը պետք է առանձին լինեն և խուսափեն խառնվելուց:

B. ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Խաղահրապարակ ժամանող այցելուներին փակցված նշանների միջոցով հիշեցվում է, որ խաղահրապարակում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է դիմակներ կրել: Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Այս պահանջից ազատվում են միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դիմակ, սակայն նրանք պետք է հաշվի առնեն իրենց իրենց և այլ մարդկանց սպառնացող վտանգը, մինչ որոշում կկայացնեն գալ բացօթյա խաղահրապարակ:
- Խաղահրապարակում պետք է տեղադրվեն [ցուցանակներ](#), որոնք զգուշացնում են, որ ախտանիշներ ունեցող այցելուները չպետք է մտնեն խաղահրապարակի տարածք:
- Հնարավորության սահմաններում ապահովեք ձեռքերի լվացման միջոցներով կամ ախտահանիչով՝ նպաստելու ձեռքերի հիգիենայի պահպանմանը, հատկապես ծանրաբեռնված ժամերին: Օգտագործեք ձեռքերի ախտահանիչ միջոց, որը պարունակում է 60% էթանոլ կամ 70% իզոպրոպանոլ: Երբեք մի՛ օգտագործել մեթանոլ պարունակող ախտահանիչ միջոց, քանի որ այն թունավոր է երեխաների և մեծահասակների համար:
- Ծնողները, ինամակալները և հսկող մեծահասակները պետք է պատրաստ լինեն խաղահրապարակի սարքավորումներն օգտագործելուց առաջ և հետո իրենց երեխաներին տրամադրել ձեռքերի ախտահանիչ միջոց:



- ❑ Մաքրող քիմիական նյութեր ընտրելիս խաղահրապարակի օպերատորները պետք է օգտագործեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված N ցուցակի՝ COVID-19-ի դեմ արդյունավետ արտադրանքներ՝ հետևելով ապրանքի հրահանգներին: Օգտագործեք այնպիսի ախտահանող միջոցներ, որոնք պիտակավորված են որպես վիրուսային հարուցիչների առաջացման դեմ արդյունավետ միջոցներ, նոսրացված կենցաղային քլորային (բլիշ) լուծույթներ (5 ճաշի գդալ՝ մեկ գալոն ջրին) կամ առնվազն 70% ալկոհոլ պարունակող սպիրտային լուծույթներ, որոնք հարմար են մակերեսների համար: Աշխատակիցներին սովորեցրեք հետևել արտադրողի ցուցումներին և Cal/OSHA պահանջներին՝ անվտանգ օգտագործման համար: Մաքրող կամ ախտահանող միջոցներ օգտագործող աշխատողները պետք է կրեն ձեռնոցներ և այլ պաշտպանիչ միջոցներ՝ ապրանքի պահանջներին համապատասխան:
- ❑ Համոզվեք, որ բոլոր աշխատողներին սովորեցվել է անհրաժեշտության դեպքում օգտագործել և ունենալ մաքրող և ախտահանող ունիվերսալ միջոցների բավարար պաշար:

C. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Խաղահրապարակի առցանց հարթակները (կայք, սոցիալական ցանցեր և այլն) տալիս են հստակ տեղեկություններ ընթացիկ արձանագրությունների, դիմակների պատշաճ օգտագործման անհրաժեշտության, վարակի տարածման վերահսկման միջոցառումների կիրառման և ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջների վերաբերյալ:
- ❑ Հաստատության օպերատորները պետք է բոլոր բացօթյա խաղահրապարակներում տեղադրեն ցուցանակներ՝ այցելուների հիշեցնելու ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի տարածման վերահսկման հետևյալ պահանջների մասին.
 - 2 և ավելի տարեկանից բարձր ցանկացած անձ պետք է խաղահրապարակում գտնվելու ողջ ընթացքում դիմակ կրի:
 - Մնացեք տանը, եթե ունեք ջերմություն, հազ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն:
 - Խաղահրապարակում չի թույլատրվում ուտել կամ խմել, որպեսզի հնարավոր լինի ողջ ընթացքում դիմակ կրել:
 - Մեծահասակներից կամ ինամակալներից պահանջվում է հետևել իրենց երեխաներին և համոզվել, որ նրանք իրենց տան անդամ չհանդիսացող մարդկանցից պահպանում են առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն:
 - Խաղահրապարակ գալուց առաջ և գնալուց հետո լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը:
 - Այցելությունները կարող են տևել մինչև 30 ր, երբ խաղահրապարակում այլ մարդիկ կան:
 - Տարեցներին և առողջական խնդիրներ ունեցող անձանց պետք է հիշեցնել խուսափել այլ մարդկանց ներկայությամբ լինել խաղահրապարակում:

Վերևում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.



Բիզնեսի
կոնտակտային
անունը՝ _____
Հեռախոսահամարը՝ _____
Վերջին վերանայման
ամսաթիվը՝ _____